

ԳԻՏԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԿԱԿՈՒՄՈՒԹՅՈՒՆ

ՄԻ ԲԱՐՐԱՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայոց լեզուն այժմ ապրում է զարգացման այնպիսի շրջանում, երբ օրավուր ընդհանուր, համազգային լեզվի մեջ ձուլվում, անհետանում են բազմաթիվ բարբառներ:

Այդ իսկ տեսակետից մեծ անհրաժեշտություն է դարձել բարբառների գիտական, խորը ուսումնասիրությունը: Առանց մեր բարբառների նման ուսումնասիրման՝ հնարավոր չէ հանգամանորեն հետազոտել հայոց լեզուն: Բարբառագիտության հարցերի մարքսիստական լուծումը հնարավորություն կտա ճշգրիտ ու բազմակողմանիորեն պարզարանելու մեր լեզվի բառապաշարի, քերականական կառուցվածքի, նրա պատմական զարգացման, անցած էտապների հետ կապված բազմաթիվ պրոբլեմներ:

Համազգային միասնական լեզվի ճյուղավորումները հանդիսացող տերիտորյալ բարբառների, խոսվածքների մեջ շատ հաճախ պահպանվում են լեզվական այնպիսի փաստեր, որոնք վաղուց ի վեր անհետացել են, չկան ոչ միայն ժամանակակից լեզվում, այլև հնագույն շրջանի լեզվի գրավոր վկայության՝ զբառարի մեջ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը հատուկ ուշադրություն է դարձնում բարբառների ուսումնասիրման վրա, «Հայ բարբառներ» սերիայով հրատարակելով առանձին ուսումնասիրություններ տարբեր բարբառների մասին:

Այս տարի այդ սերիայով լույս է տեսել Վ. Ա. Պետոյանի «Սասունի բարբառը»¹:

Ամեն մի բարբառի մասին հրատարակված հետազոտությունը մի քայլ է հայ բարբառների, հետևապես և հայոց լեզվի ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու ուղղությամբ: Այդ տեսակետից էլ խրախուսանքի արժանի է «Սասունի բարբառ» լույս ընծայումը:

Այս աշխատության արժանիքներից մեկն այն է, որ ընկ. Վ. Պետոյանը ժմուշներ Սասունի բարբառից՝ բաժնում (էջ 65—96) հավաքել և զետեղել է բավականին հարուստ տեքստեր: Աշխատության մյուս արժանիքը բավականին ընդարձակ բառարանն է (էջ 99—169), որի 4000 բառերից 400-ը ընկ. Վ. Պետոյանը ընդգրկել է անուղղակի իմաստներով, բացակայում են հայոց լեզվի բառարաններում²:

Առավելություն է նաև Սասունի տասը շրջանների գյուղերի ցուցակը (էջ 171—198), որը բառարանի հետ միասին, հետաքրքրական նյութ կարող է տալ հայ ժողովրդի և նրա լեզվի պատմության այլևայլ հարցերը

¹ Վ. Ա. Պետոյան, Սասունի բարբառը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1954:

² Նույն տեղում, էջ 6:

լուսարանողներին: Ուշագրավ է նաև աշխատությունը կցված՝ «Սասուն — Տարոնի քարտեզը»:

Սակայն բարրաժի բուն ուսումնասիրությունը՝ հնչյունաբանությունը և ձևաբանությունը (էջ 15 — 64) ունի մի շարք տկնաթիվ թերություններ: Ամենից առաջ աշխատությունը մեջ բացակայում է որոշակի սխեմայի: հնչյունական երևույթների համեմատման գեպտում հեղինակի կողմից չի պահպանվում միօրինակությունը: Նա մեկ՝ Սասունի բարրաժի լեզվական երևույթները համեմատում է գրարարի (էջ 17) մեկ՝ աշխարհարարի (էջ 18), իսկ երրորդ գեպտում՝ բարրաժային ձևերի (էջ 19) հետ:

Ակնհայտ թերություններից մեկն էլ այն է, որ ուսումնասիրությունը չափազանց սխեմատիկ ու համառոտ է: Այն աստիճանի սեղմ է, որ Սասունի բարրաժին հատուկ լեզվական բազմաթիվ, նույնիսկ ամենահասարակ, երևույթների մասին հնարավոր չի լինում պատկերացում կազմել: Բարրաժի հնչյունաբանությունը պատկերող՝ այդ թվում և ձայնավորներին նվիրված սեղմ էջերը չեն տալիս բարրաժի հնչյունաբանական և հնչյունափոխական առանձնահատկությունների նվազագույն պատկերը:

Ձայնավորները թվարկող շարքում տեղ են գտել այնպիսի հնչյուններ, որոնք ոչ մի անգամ չեն կիրառված ոչ տեքստերում, և ոչ իսկ բառարանում: դրան հակառակ՝ տեքստերում և բառարանում հանդիպում ենք ձայնավորների, որոնք չեն նշված Սասունի բարրաժի ձայնավորների մեջ:

Ընկ. Պետոյանը նշում է, որ Սասունի բարրաժն ունի 9 ձայնավոր՝ ա, օ, ու, է, ո, ի, օ, տէ: Ուէ ձայնավորը չկա ոչ տեքստերում, ոչ էլ բառարանում: այն հեղինակը մի գեպտում համարում է ձայնավոր, մյուս գեպտում՝ երկհնչյուն (էջ 15): Սասունի բարրաժի ձայնավորների և առհասարակ հնչյունների մեջ հեղինակի կողմից չեն նշված ե և ո, մինչդեռ բուն ուսումնասիրության մեջ, տեքստերում և բառարանում հանդիպում ենք բազմաթիվ բառերի գրված ե և ո-ով (էջ 81, 82, 89, 100, 107, 108, 113, 115 — 118, 122, 130 և այլն): Չնայած որ օ հնչյունը տեղ է գտել ձայնավորների ցուցակում, սակայն 4000 բառից բաղկացած բառարանում ո-ով գրված ոչ մի բառի չենք հանդիպում:

Ամեն մի բարրաժագիտական աշխատության մեջ հեղինակի կողմից տրվող սահմանումները անպայմանորեն, պետք է իրենց հաստատումը գրտնեն տեքստերում, բառարանում, այլապես ուսումնասիրությունն արժեքազրկվում է, որովհետև ընթերցողը, տվյալ բարրաժով հետաքրքրվողը չի կարողանա որոշել, որն է ճիշտը՝ սահմանման մեջ գրվածը, թե՛ տեքստերում և բառարանում տեղ գտած բառը: Տարարախտարար, հեղինակի սահմանումները, մեծ մասամբ, հակասում են բերված օրինակներին, տեքստերում և բառարանում տեղ գտած բառերին:

Այսպես, օրինակ՝ «Բազմավանկ բառերի մեջ ա ձայնավորը երբեմն ընկնում է, երբեմն փոխվում է օ-ի», — գրում է հեղինակը (էջ 15 — 16): Բերված օրինակների մեջ կա կարգացուր-գարաացվուր բառը, որտեղ ա-ն ոչ սղվել է, ոչ էլ փոխվել օ-ի: Բառարանում ևս տեղ են գտել բազմաթիվ նման օրինակներ:

Այն գեպտում, երբ հեղինակը վկայում է, թե Սասունի բարրաժում ո ձայնավորը բառամիջում գաղնում է ու (էջ 18), բառարանում տեղ են գտել հովթափ, հորհամ, հող և բազմաթիվ այլ բառեր, որտեղ ո-ն մնացել

է անփոփոխ, Հակառակ ուսումնասիրողի այն պնդմանը, թե «Սասունի բարբառում ձայնեղ Բ-ն դարձել է խուլ ալ» (էջ 20)», 92—94 էջերում քսան անգամ հանդիպում ենք Բ-ի բառին, որտեղ Բ-ն մնացել է անփոփոխ. այդպիսի բազմաթիվ օրինակներ կան և բառարանում:

«Բ» բաղաձայնը բառերի սկզբում ձայնեղների խլացման կանոնի համաձայն դառնում է Կ-ը ... նույն երևույթը տեղի է ունենում նաև բառամիջում» (էջ 21),— գրում է ընկ. Վ. Պետոյանը: Սակայն, բառարանում տեղ գտած զնդիլ, զնդուդ անզիգ, շոգիլք, թագ բառերը հակառակն են ապացուցում:

Այնուհետև կարգում ենք, որ խուլ ալ, ա, Կ-ի դիմաց Սասունի բարբառը ունի ձայնեղ Բ, Գ, Դ (էջ 22, 25), մինչդեռ, իր իսկ վկայակոչած սպաս, սպիտակ, սպիտկիկ, արնպարտք, լուստուն, մատնուգ, անարտասունք, տախտագ, պատմութիւն (86), լուսկանչ, կանգնման, էրկանք, էրկսնուգ, աղբրկին և բազմաթիվ այլ բառեր ճիշտ ու ճիշտ հակառակն են վկայում: Այսպիսին է պատկերը նաև մյուս հնչյունների նկարագրման դեպքում: Նույն բառին «Սասունի բարբառը» աշխատություն մեջ հանդիպում ենք տարբեր ուղղագրություններով. պէրան (67), պերան (29), աստվածածին (89), աստվածածին (90), աստվածածին (91), թուկուվուր (18), թուկվուր (21), թուկվոր (78), թագվուր (120), աղնիգ, աղջիգ (81), մէգ (38), մեգ (81, 82) և այլն և այլն:

Այսպիսի դեպքերում գծվար է որոշել, թե ո՞րն է ճիշտը, բարբառին հատուկը:

Այն դեպքում, երբ չի ապահովված բարբառի լեզվական իրողությունների ուսումնասիրության նվազագույնը, մեր կարծիքով, թերութուն է, երբ հեղինակը թվարկում է, թե ո՞ր երևույթները չկան Սասունի բարբառում: Մանավանդ, որ դրանք կրկնված են. այսպես, օրինակ՝ «Ի-ի փոխարեն Խ երբեք չի գործածվում» (էջ 13), Ի-ի հնչյունափոխության երևույթը Սասունի բարբառում չկա» (էջ 30), «բարբառում քմային կամ փափուկ բաղաձայն հնչյուններ՝ գ՛, կ՛, ք՛, ո՛ չկան» (էջ 13), «քմային կամ փափուկ գ՛ Սասունի բարբառում չկա» (էջ 21): Այնուհետև շարունակում է՝ «Ինչպես հայտնի է Մուշի բարբառի բաղաձայնական համակարգը քառաստիճան է ... մինչդեռ Սասունի բարբառի բաղաձայնական համակարգը եռաստիճան է՝ ...» (էջ 27): Մի էջ հետո՝ «Սասունի բարբառն ի տարբերություն Մուշի բարբառի չունի բաղաձայնական քառաստիճան համակարգ...» (էջ 29) և այլն և այլն: «Անկում», «հավելում» ենթափերնագրերի տակ կրկնվում է այն, ինչ արդեն ասված է առանձին-առանձին բաղաձայնների մասին: Այն դեպքում, երբ մի ամբողջ բարբառի բուն ուսումնասիրությունը 50 էջ է կազմում, նման կրկնություններն անհանդուրժելի են:

«Մուշի և Սասունի բարբառների մասին» հատվածում (էջ 27—30) հեղինակը այն ճիշտ կարծիքն է հայտնում, որ Մուշի և Սասունի բարբառները տարբեր են, սակայն այդ բանն ապացուցելու համար նա չի բերում անհրաժեշտ քանակությամբ փաստեր: Բավական է նշել, որ երկու բարբառների համեմատման դեպքում՝ ձևարանությունից ոչ մի օրինակ չի բերում, մինչդեռ լեզուների, ինչպես նաև բարբառների նմանություններն ու տարբերությունները ցույց տալու հարցում մեծ նշանակություն ունեն ձևարանական երևույթները: Հեղինակը սխալվում է, երբ գրում է, թե Տեղեկագիր 5—7

Մուշի բարբառում ձայնեղների խլացում և խուլերի ձայնեղացում տեղի չի ունենում:

«Սասունի բարբառը» ուսումնասիրության թերություններից մեկն էլ այն է, որ չեն նշված բարբառի մեջ տեղ գտած շեղումներն ու բացառությունները, մինչդեռ, դրանք ամեն մի բարբառի ուսումնասիրության գործում մեծ նշանակություն ունեն:

Զափազանց սխեմատիկ է նաև ուսումնասիրության՝ «Ջևարանություն» բաժինը: Երկրորդ—ութերորդ հոլովումների և ոչ մի հատկանիշ չի ցույց տրվում ուսումնասիրողի կողմից: Այնուհետև՝ չխոսելով ածականների մասին՝ սկսում է դրանց համեմատական աստիճաններից: Չհիշատակելով թվականների մասին ընդհանրապես՝ անցնում է քանակական թվականներին և այդ վերնագրի տակ, չգիտես, թե ինչու խոսում է դասական, բաշխական, չափական թվականների մասին (էջ 38—39):

Ուսումնասիրության մեջ տեղ են գտել նաև այլ կարգի թերություններ. հեղինակը գրել է՝ «Երբ մ-ին հաջորդում է ր ձայնորդը, երկուսի մեջտեղը ր թարմատարն է ավելանում. ինչպես՝ համրել-համբրել...» (էջ 20): ր-ն թարմատար չէ, այլ հնչյունական հավելում. թարմատարը՝ լեզվաբանական միանգամայն այլ հասկացողություն է: Ա ձայնավորի բաժնում խոսվում է ամեն ինչի մասին, բացի Ա-ից. այդտեղ հիշատակվել են ե, է, ո, ի ձայնավորները. շեշտադրության օրենքը և այլն: Այդտեղ ա-ին վերաբերում են միայն հետևյալ բառերը՝ «Միավանկ բառերի մեջ ձայնավոր ա-ի անկում կամ սղում տեղի չի ունենում» (էջ 17). միավանկ բառերի մեջ ա-ի սղում երբեք չէր կարող տեղի ունենալ: Շեշտի մասին ասվում է նաև, թե միավանկ բառերում շեշտը դրվում է ձայնավորի վրա (էջ 16). ավելորդ է ասել, որովհետև այլ կերպ լինել չէր կարող:

Այ երկրորդ բաժնում, չգիտես թե ինչու, խոսում է ալ երկրորդ բառի մասին, ըստ որում ասվում է, որ ալ երկրորդին հետևյալ բառերում համապատասխանում է է ձայնավորը՝ ալեւացնել—էվելցնիլ, ալէլ—պակաս, էվիլ—բազաս: Այս դեպքերում է-ն համապատասխանում է ոչ թե ալ երկրորդին, այլ ա-ին (էջ 19): Եվ հետո, ինչու նույն արմատը մի դեպքում էվիլ մյուս դեպքում էվել ձևով է հանդես բերված:

Այս ուսումնասիրության թերությունը պետք է համարել նաև այն, որ հնչյունական ձևաբանական, բառակազմական բազմաթիվ երևույթներ, որոնք կարելի է դիտել բառարանում և տեքստերում՝ վրիպել են հեղինակի աչքից:

Ընդունելով ընկ. Վ. Պետոյանի «Սասունի բարբառը» աշխատության արժանիքները, գտնում ենք, որ այն պարունակում է մի շարք լուրջ սխալներ ու թերություններ, որոնք անհրաժեշտ են դարձնում Սասունի բարբառի գիտական լուրջ ուսումնասիրությունը:

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ